Զինծառայողների
ապահովագրության
հիմնադրամ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**01.06.2021 - 01.12.2021**

**Հաշվետու ժամանակաշրջան՝ 01.06.2021-01.12.2021թ**

Հաշվետվությունն իր մեջ ներառում է 2021թ.-ի երկրորդ կիսամյակի ամփոփ նկարագրությունը:

**Կիսամյակի ամփոփում համառոտ թվերով**

| | |
|---|---|
| **Հատուցումներ** | 12.5 միլիարդ |
| **Պարտադիր վճարներ** | 14.6 միլիարդ |
| **Նվիրաբերություններ** | 544.8 միլիոն |
| *Կայք* | 190 միլիոն |
| *բանկ* | 354.9 միլիոն |

**18%**

**շահառուների աճ**

որոշում է կայացվել հատուցումներ տրամադրել ևս 831 դեպքերի մասով

**6,6**

**միլիարդ դրամ միանվագ հատուցում**

ՁԱՀ-ն արդեն կատարել է միանվագ հատուցումները և ձևավորել 22,5 մլրդ դրամի պարտավորություն 20 տարվա ամսական հատուցումների գծով

Հատուցումներ են տրամադրվել 831 դեպքերի մասով, որոնցից.

| Զոհ | 1-ին կարգ | 2-րդ կարգ | Անհայտ բացակայող |
|---|---|---|---|
| 303 | 92 | 334 | 102 |

## ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 831 ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍՈՎ

| | Ընդամենը պարտավորություններ՝ ներառյալ միանվագ գումար | Մնացած Պարտավորություններ |
|---|---|---|
| Զոհված / անհայտ բացակայող | 26,9 միլիարդ | 22,5 միլիարդ |
| 1 կարգի հաշմանդամ | 6,1 միլիարդ | 5,1 միլիարդ |
| 2 կարգի հաշմանդամ | 12,5 միլիարդ | 10,7 միլիարդ |
| Ընդամենը | 45,5 միլիարդ | 38,2 միլիարդ |

**Հատուցված 831 դեպքերի բաշխվածությունն ըստ ծառայության տեսակի.**



# ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Հիմնադրամը գրանցել է ֆինանսական միջոցների աճ պարտադիր վճարների տեսքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում հատուցումներ են տրամադրվել 44 օրյա պատերազմի ընթացում տեղի ունեցած դեպքերի մեծամասնությանը՝ 2021թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում վճարված հատուցումներն ավելի քիչ են:

**Նվիրաբերություն**

**544** ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ

**Պարտադիր վճարներ**

**14,6** ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ

**Հատուցումներ**

**12,5** ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ




## ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կարևորելով շահառուների ֆինանսական կրթվածությունը՝ ՁԱՀ-ը քայլեր է ձեռնարկել ֆինանսական գրագիտության բարձրացման ծրագրի ներդրման ուղղությամբ:

Այս ծրագրի շրջանակներում ծավալային ուսումնասիրություններ են կատարվում, որի արդյունքում վեր են հանվելու վերապատրաստման անհրաժեշտություն ունեցող թիրախային խմբերը, և յուրաքանչյուր խմբի համար մշակվելու են անհատական ծրագրեր կրթական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

ՁԱՀ-ը բաց է մեր շահառուներին առնչվող այլ ծրագրերի և ՀԿ-ների հետ համագործակցության համար: Պատերազմը խթան է հանդիսացել մի շարք ՀԿ-ների ստեղծմանը, որոնք բացի բժշկական և սոցիալական աջակցություն ցուցաբերելուց կազմակերպում և իրականացնում են բազում կրթական ծրագրեր: Կապ է հաստատվել ինչպես նորաստեղծ, այնպես էլ տարիների փորձ ունեցող ՀԿ-ների հետ: Քննարկումների և հանդիպումների արդյունքում ընդհանուր շահերի հիման վրա կնքվել են համագործակցության հուշագրեր:

# ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԱՐԺՈՒՅԹԻ

Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել է 544.8 միլիոն ՀՀ դրամ նվիրաբերություն, որից 57% (311.5 միլիոն ՀՀ դրամ) հենց ՀՀ դրամով է: ԱՄՆ դոլարով կատարված նվիրաբերությունները կազմում են 36% (194 միլիոն ՀՀ դրամին համարժեք): Ռուբլիով և Եվրոյով նվիրաբերությունները համապատասխանաբար կազմում են 3% (17 միլիոն ՀՀ դրամին համարժեք) և 4% (22.5 միլիոն ՀՀ դրամին համարժեք):




# ԽՈՇՈՐ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

| | ՀՀ ԴՐԱՄ |
|---|---|
| ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ | 69,889,134 |
| Սան Ֆրանցիսկոյի Արցախի աջակցության հանձնաժողով FASF-ի միջոցով | 47,592,000 |
| Գլոբալ Ինվեսթ ՍՊԸ | 26,400,000 |
| Ամերիկահայ նվիրաբերողներ AWHF-ի միջոցով | 23,491,995 |
| Վեգա Ոէորլդ ՍՊԸ | 15,455,000 |
| Մելիքյան Վահե | 9,700,000 |
| Այդի Բանկ ՓԲԸ | 6,925,000 |
| Էֆֆեկտ Գրուպ ՓԲԸ | 6,000,000 |
| Էսզեթ Ֆարմա ՍՊԸ | 5,000,000 |
| Արմսվիսբանկ ՓԲԸ | 3,462,000 |
| անանուն բարերար | 3,250,065 |

Ուզում ենք շնորհակալություն հայտնել մեր բոլոր նվիրատուներին, ինչպես նաև Հայաստանում և Արցախում յուրաքանչյուր ամիս պարտադիր վճարներ կատարող հարկատուներին: Մեր առաքելությունը կյանքի է կոչվում յուրաքանչյուր հայի ներդրման շնորհիվ: Այս նախագծի շրջանակներում ողջ ազգով ապավեն ենք լինում այն զինվորներին կամ նրանց ընտանիքներին, ովքեր տվեցին իրենց ամենաթանկը հանուն մեր արժանապատիվ ապագայի և հզոր հայրենիքի:

# ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻ ԱՐՇԱՎՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացվել են հետևյալ արշավները.

- Մեգերիան կարպետ ընկերության հետ համատեղ գորգ է հյուսվում, որի ամեն մի հանգույցը նվիրաբերություն է՝ համարժեք 1000 ՀՀ դրամի: Սփյուռքի հայրենակիցները կարող են վիրտուալ հանգույցի միջոցով նվիրաբերություն կատարել: Գորգը հյուսելուց հետո կվաճառվի աճուրդով: Արշավի շրջանակներում կատարվել է ավելի քան 5 միլիոն ՀՀ դրամի նվիրաբերություն:

- Սփյուռքի իրազեկման ծրագրի շրջանակներում այց ԱՄՆ-ի հայաշատ համայնքներ ՁԱՀ-ի մասին իրազեկվածություն ստեղծման, կարևոր կառույցների և համայնքների հետ հարաբերությունների կառուցման նպատակով: Ծրագրի շրջանակում այցելեցինք 10 քաղաք:

  - 70+ ավել հանդիպումներ
  - 700+ հանդիպումների մասնակիցներ
  - $50,000 – ամենամեծ միանվագ նվիրաբերությունը
  - X4 – ՁԱՀ-ի ամերիկյան գործընկեր AWHF-ի միջոցով ստացվող նվիրաբերությունների քառապատիկ աճ. $16.8 հազար նոյեմբեր ամսին՝ հոկտեմբերի $3.8 հազարի համեմատությամբ:
  - 18+ հոդվածներ, հարցազրույցներ, ուղիղ միացումներ ՁԱՀ-ի հետ: Շարունակական է:
  - Լոս Անջելեսի Գլխավոր Հյուպատոսության կողմից նկարների ցուցահանդես-վաճառքի կազմակերպում: Ողջ հասույթն ուղղվելու է ՁԱՀ-ին:
  - Վստահության և իրազեկվածության ստեղծում և ամրապնդում:
  - Լրատվամիջոցների հետ կապի հաստատում և համագործակցություն:

Նվիրատուների, ինչպես նաև ՁԱՀ-ի գործունեությամբ հետաքրքրված լսարանի և ՁԱՀ-ի շահառուների հետ համատեղ առցանց քննարկում, որի ընթացքում ՁԱՀ-ի աշխատակիցները ներկայացրեցին ՁԱՀ-ի առաքելությունը, հաշվետվողականությունը, վերջին պատերազմից հետո իրականացված աշխատանքները: Շահառուները ներկայացրեցին իրենց պատմությունը, որից հետևեցին լսարանի հարցերը:
Ձեռք բերած նոր կապերի արդյունքում առաջիկայում կազմակերպվելու են դրամահավաքին ուղղված 3 տարբեր արշավներ Բոստոնում, Լոս Անջելեսում և Նյու Յորքում:

# ՄԻԱՑԻՐ ՄԵՁ

## ԻՄԱՑԻՐ ԱՎԵԼԻՆ

Իմացիր ավելին Չինծառայողների ապահովագրության հիմնադրամի մասին: Այցելիր կայք, հետևիր մեր ներկայությանը սոց մեդիայում:

## ՏԱՐԱԾԻՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարածիր տեղեկատվություն մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին:

## ԱՋԱԿՑԻՐ

Կատարիր քո նվիրաբերությունը՝ ի բարօրություն հայրենիքի համար կյանքը և առողջությունը զոհաբերած զինվորի և նրա ընտանիքի:

Նվիրաբերել

# Շնորհակալություն

WWW.1000PLUS.AM